

Medi-Cal-ի հետաքրքիր նորություններ 26-49 տարեկան մեծահասակների համար:



2024 թվականի հունվարի
1-ից Կալիֆոռնիայում
ընդունված նոր օրենքը թույլ
է տալիս **26-49** տարեկան
մեծահասակներին, անկախ
ներգաղթի կարգավիճակից,
իրավասու լինել **Medi-Cal-ի**
ամբողջական
ապահովագրության
համար, որը ներառում է.



• Բժշկի այցեր



• Հիվանդանոցային բուժում



• Դեղատոմսեր



• Կանխարգելիչ խնամք

Ամբողջական Medi-Cal-ով՝ տարեց, կույր և հաշմանդամ անձինք կարող են դիմել Տնային օժանդակության
ծառայություններ (IHSS) ծրագրին: IHSS-ը տրամադրում է տնային խնամք՝ որպես տնից դուրս խնամքի
այլընտրանք և հնարավորություն է տալիս խնամք ստացողներին ապահով մնալ իրենց տներում:



Հաճախակի տրվող հարցեր (FAQ) Ձեր Medi-Cal-ի բժշկական նպաստների ընդլայնման մասին

1. Ես դեռ ապահովագրված եմ Medi-Cal-ի կողմից:

Այո: Դուք դեռ ունեք Medi-Cal: Սկսած **2024 թվականի հունվարից**՝ շուտով կկարողանաք լրացուցիչ բժշկական նպաստներ ստանալ Ձեր Medi-Cal-ի ապահովագրության հետ: Դուք կունենաք այս նպաստներն այնքան ժամանակ, քանի դեռ իրավասու եք Medi-Cal-ի համար:

2. Ինչո՞ւ եմ ես ստանում Medi-Cal-ի լրացուցիչ նպաստներ:

2024 թվականի հունվարի 1-ից California-ում նոր օրենքը կտրամադրի full Medi-Cal 26-ից 49 տարեկան մարդկանց, ովքեր իրավասու են Medi-Cal-ի համար: Ի տարբերություն նախորդների, ներգաղթի կարգավիճակը նշանակություն չունի: Այս նոր օրենքը նշանակում է, որ California-ի բոլոր բնակիչները, ովքեր համապատասխանում են Medi-Cal-ի կանոններին, իրավունակ են ստանալ full Medi-Cal-ի նպաստներ:

3. Արդյո՞ք ես պետք է որևէ գործողություն ձեռնարկեմ հենց հիմա:

Ոչ: Եթե իրավունակ եք, ապա Ձեզ ավտոմատ կերպով կտրվեն full Medi-Cal-ի նպաստները **2024 թվականի հունվարի 1-ին**: Լրացուցիչ նպաստներ ստանալու համար պետք չէ որևէ բան անել: Եթե փոստով փաթեթ եք ստանում՝ Ձեր Medi-Cal-ը երկարաձգելու համար, պետք է լրացնեք և վերադարձնեք այն փոստով, հեռախոսով, անձամբ կամ առցանց: Դուք կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի գրասենյակ օգնության համար:

4. Ի՞նչ ծառայություններ կարող եմ ստանալ full Medi-Cal-ով:

Դուք կարող եք ստանալ.

Կանխարգելիչ խնամքի ծառայություններ

Դրանք ներառում են բժշկական, ատամնաբուժական, տեսողության, լսողության, հոգեկան առողջության և հոգեմետ դեղերի օգտագործման խանգարումների (substance use disorder) զննումներ: Կանխարգելիչ խնամքի և զննումների բոլոր ծառայություններն անվճար են: Ավելին իմանալու համար կապվեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի անդամների ծառայությունների կամ Fee-for-Service (regular) Medi-Cal-ի մատակարարի հետ:

Էջ 1 12-ից



Ատամնաբուժական ծառայություններ

Դուք կարող եք ատամնաբուժական ծառայություններ ստանալ Medi-Cal-ի միջոցով: Ձեր ատամնաբուժական նպաստները չեն փոխվում, երբ գրանցվում եք Medi-Cal Managed Care Plan-ում:

- **Վարչաշրջանների մեծ մասում** Դուք ստանում եք Medi-Cal-ի ատամնաբուժական ծառայություններ **Medi-Cal Fee-for-Service (regular) Program-ի** միջոցով: Դուք պետք է այցելեք ատամնաբույժի, ով ընդունում է Medi-Cal-ը: Գրանցված ատամնաբուժական մատակարար գտնելու համար զանգահարեք Medi-Cal Dental-ի Անդամների հեռախոսային սպասարկման կենտրոն՝ **1-800-322-6384** (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով: Չանգն անվճար է:

Դուք կարող եք նաև գտնել ատամնաբուժական մատակարար և ավելին իմանալ Medi-Cal ատամնաբուժական ծառայությունների մասին «Smile, California» կայքէջում՝ smilecalifornia.org:

- Եթե ապրում եք **Լոս Անջելես վարչաշրջանում**, կարող եք ծառայություններ ստանալ **Medi-Cal Dental Program-ի** միջոցով՝ Fee-For-Service (regular) ատամնաբուժական կամ **Medi-Cal Dental Managed Care Plan-ի** միջոցով: Ծրագրին միանալու մասին ավելին իմանալու համար զանգահարեք Health Care Options՝ **1-800-430-4263** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Medi-Cal Dental Managed Care Plan ընտրելու համար լրացրեք ատամնաբուժական ընտրության ձևաթուղթը, որը ստացել եք Ձեր *My Medi-Cal Choice* Packet-ում կամ զանգահարեք Health Care Options՝ **1-800-430-4263** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Եթե չեք ընտրում Medi-Cal Dental Managed Care Plan, Դուք կգրանցվեք Medi-Cal Dental Fee-for-Service (regular) ծրագրում:
- Եթե դուք գտնվում եք ատամնաբուժական կառավարվող խնամքի (DMC) ծրագրում Sacramento ի կամ Los Angeles ի վարչաշրջաններում, դուք կարող եք զանգահարել ձեր ծրագրին՝ ատամնաբուժական ծառայություն ձեռք բերելու օգնության համար:

DMC ծրագիր	Sacramento	Los Angeles
Access Dental Plan, Inc www.premierlife.com	(877) 821-3234 (CSL) (800) 735-2929 (TTY/TDD)	(888) 414-4110 (CSL) (800) 735-2929 (TTY/TTD)
Health Net of California, Inc www.healthnet.com	(877) 550-3868 (TTY/TTD)	(800) 977-7307 (TTY/TTD)

Liberty Dental of California, Inc www.libertydentalplan.com	(877) 550-3875 (CSL) (877) 855-8039 (TTY)	(800) 703-6999 (CSL) (877) 855-8039 (TTY)
---	--	--

- Եթե ապրում եք in **San Mateo County**-ում, դուք կստանաք ատամնաբուժական ծառայություններ Health Plan of San Mateo-ի (HPSM) կամ FFS-ի միջոցով:
 - Եթե դուք անդամագրվել եք HPSM-ում, դուք կստանաք ատամնաբուժական ծառայություններ HPSM-ի միջոցով: Health Plan of San Mateo-ի միջոցով ատամնաբուժական ծառայությունների մասին ավելին իմանալու համար զանգահարեք ծրագրին **1-800-750-4776** կամ **650-616-2133** (TTY՝ 1-800-735-2929 կամ 711) հեռախոսահամարով:
 - Եթե դուք անդամագրվել եք Kaiser-ում, դուք կստանաք ատամնաբուժական ծառայություններ FFS dental-ի միջոցով: Ատամնաբուժական մատակարար գտնելու համար, դուք կարող եք զանգահարել Medi-Cal Dental-ի Անդամի ծառայության կենտրոն **1-800-322-6384** (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով, երկուշաբթի – ուրբաթ, առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան ժամը 5:00:

Հոգեկան առողջության ծառայություններ

Եթե հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեք, խոսեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի նոր անդամի ծառայությունների կամ Ձեր առաջնային խնամքի մատակարարի հետ: Դուք կարող եք ստանալ հոգեկան առողջության որոշ ծառայություններ Ձեր նոր Medi-Cal Managed Care Plan-ի ցանցի միջոցով: Դուք կարող եք նաև իրավասու լինել հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների համար: Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիրը տրամադրում է մասնագիտացված ծառայություններ: Ձեր Medi-Cal Managed Care Plan-ը պետք է օգնի Ձեզ հոգեկան առողջության խնամքի կարիքների հարցում, ինչպես նաև օգնի գտնել ճիշտ մատակարարին: Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների համար County Mental Health Plan-ի կոնտակտային ցանկը գտնվում է bit.ly/mhp-contact-list հասցեով:

Ալկոհոլի և թմրամիջոցների կախվածության բուժման ծառայություններ

Եթե ալկոհոլի կամ այլ հոգեմետ դեղերի օգտագործման խանգարման բուժման ծառայությունների հետ կապված օգնության կարիք ունեք, կարող եք գնահատում ստանալ Ձեր Medi-Cal Managed Care Plan-ից: Կարող եք նաև զանգահարել Ձեր վարչաշրջանի Drug Medi-Cal Program-ին հոգեմետ դեղերի կախվածության խանգարումների բուժման ծառայությունների համար: Կամ զանգահարեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի անդամների ծառայությունների բաժին՝ bit.ly/mhp-contact-list-ի միջոցով:

Ընտանիքի պլանավորման և հակաբեղմնավորման ծառայություններ

Դուք կարող եք ընտանիքի պլանավորման ծառայություններ ստանալ Medi-Cal-ի ցանկացած մատակարարից, նույնիսկ եթե դրանք ընդգրկված չեն Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի ցանցում: Ձեզ անհրաժեշտ չէ ուղեգիր կամ նախնական թույլտվություն (նախապես հաստատում): Համալճար չկա: Ավելին իմանալու համար կապվեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի անդամների ծառայությունների կամ Fee-for-Service (regular) Medi-Cal-ի մատակարարի հետ: Ապահովագրված ծառայությունները ներառում են.

- Ընտանիքի պլանավորման նպատակով հիվանդների այցեր
- Ընտանիքի պլանավորման խորհրդատվական ծառայություններ, որոնք տրվել են հիվանդի կանոնավոր այցի ժամանակ
- Հակաբեղմնավորիչ բուժգործողություններ, ներդիրներ կամ սարքեր
- Արգանդի փողերի կապում
- Վազեկտոմիա
- Հակաբեղմնավորիչ դեղամիջոցներ կամ սարքեր
- Աբորտներ
- Ընտանիքի պլանավորման նախորդ բուժգործողությունների հետևանքով առաջացած բարդությունների բուժում
- Լաբորատոր բուժգործողություններ, ռադիոլոգիա և դեղեր, որոնք կապված են ընտանիքի պլանավորման բուժգործողությունների հետ

Դեղատնային ծառայություններ

Medi-Cal Rx-ը ֆինանսավորում է դեղատոմսով դուրս գրվող դեղերը, որոնք Ձեր մատակարարը նշանակում է Ձեզ դեղատնից ստանալու համար: Ձեր Medi-Cal Managed Care Plan-ը և Fee-for-Service (regular) Medi-Cal-ը ֆինանսավորում են այն դեղերը, որոնք Ձեր մատակարարը տալիս է Ձեզ անձամբ, օրինակ՝ բժշկի գրասենյակում կամ կլինիկայում:

Medi-Cal Rx-ի դեղատոմսով դեղերի ապահովագրության և Medi-Cal ընդունող դեղատների մասին ավելին իմանալու համար այցելեք [medi-calrx.dhcs.ca.gov](https://www.medi-calrx.dhcs.ca.gov): Կամ զանգահարեք Medi-Cal Rx-ի Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-977-2273 (TTY՝ State Relay՝ 711) հեռախոսահամարով: Ձեր Medi-Cal Benefits Identification Card-ի (BIC) համարը պատրաստ պահեք, երբ զանգահարեք:

Եթե Ձեր նոր Medi-Cal Managed Care Plan-ում գրանցվելուց հետո հարցեր ունեք, զանգահարեք Ձեր ծրագրի անդամների ծառայությունների հեռախոսահամարին:

Փոխադրում

Եթե չեք կարողանում հասնել Medi-Cal-ի ապահովագրված ծառայության վայր կամ դեղը վերցնել դեղատնից, կարող եք օգտվել անվճար Non-Medical Transportation (ոչ բժշկական փոխադրման) ծառայություններից: Դուք կարող եք անվճար

երթևեկել մեքենայով, տաքսիով, ավտոբուսով կամ այլ հանրային կամ մասնավոր տրանսպորտով: Non-Medical Transportation ծառայությունների համար Ձեր բժշկի կամ մատակարարի կողմից դեղատոմսի կարիք չկա:

Եթե Ձեր առողջական վիճակի պատճառով չեք կարող օգտվել մեքենայից, ավտոբուսից, տաքսիից կամ այլ հանրային կամ մասնավոր տրանսպորտային միջոցից Ձեր տեսակցության վայր հասնելու համար, կարող եք իրավասու լինել անվճար Non-Emergency Medical Transportation-ի (ոչ շտապ բժշկական փոխադրումների) համար: Սա կատարվում է շտապօգնության մեքենայով, անվասայակով կամ պատգարակով կահավորված ֆուրգոնով: Այն մարդկանց համար է, ովքեր չեն կարող օգտվել հասարակական կամ մասնավոր տրանսպորտից:

Ձեզ անհրաժեշտ կլինի լիցենզավորված մատակարարի դեղատոմս՝ Non-Emergency Medical Transportation խնդրելու համար: Ձեր առաջնային խնամքի մատակարարը, ատամնաբույժը, ուսնաբույժը, հոգեկան առողջության կամ հոգեմետ դեղերի կախվածության բուժման հարցերով մատակարարը կարող է նշանակել Non-Emergency Medical Transportation: Non-Emergency Medical Transportation-ը հասանելի է Ձեր առողջապահական ծրագրով նախատեսված հանդիպումների, ինչպես նաև դեղատնային ծառայությունների համար:

Եթե հանդիպման տեսակը ապահովագրված է Medi-Cal-ով, բայց ոչ առողջապահական ծրագրի միջոցով, Ձեր առողջապահական ծրագիրը չի ծածկի բժշկական փոխադրումը, բայց կարող է օգնել Ձեզ պլանավորել Ձեր փոխադրումը Medi-Cal-ով: Եթե Medi-Cal-ը ստանում եք Medi-Cal Managed Care Plan-ի միջոցով, զանգահարեք անդամների ծառայությունների բաժին՝ փոխադրում խնդրելու համար: Եթե ստանում եք Medi-Cal Fee-for-Service (regular) Medi-Cal-ի միջոցով, օգնության համար կարող եք կապվել DHCS-ի հետ: Medi-Cal-ի անդամները կամ նրանց նշանակված անձինք կարող են նամակ ուղարկել DHCSNMT@dhcs.ca.gov էլ. փոստին՝ օգնություն խնդրելով, եթե նրանց մատակարարն ի վիճակի չէ կազմակերպել Non-Emergency Transportation:

Home and community-based services (HCBS)

Դրանք ներառում են.

- In-Home Supportive Services-ի (IHSS) խնամքի իրականացում՝ Ձեզ տանը պահելու հարցերում
- Home and Community-Based Alternatives Waiver services, ինչպիսիք են՝ տնային խնամքը, տնային փոփոխությունները և անձնական խնամքի ծառայությունները
- Community-Based Adult Services, որոնք մատուցվում են կենտրոնում
- Այլ նպաստներ

Այս ծառայությունների մասին ավելին իմանալու համար այցելեք bit.ly/IHSSProgram:

5. Ի՞նչ անել, եթե ես հիմա ունեմ հղիության հետ կապված Medi-Cal:

Եթե այժմ ունեք հղիության հետ կապված Medi-Cal, ապա Դուք ունեք բոլոր բժշկական անհրաժեշտ ծառայությունները, որոնք Medi-Cal-ն ապահովագրում է: Full Medi-Cal-ի նպաստների մասին ավելին իմանալու համար այցելեք bit.ly/medi-cal-ehb-benefits:

6. Կվճարե՞մ համավճարներ:

Ոչ: Բուժօգնության համար համավճարներ չկան: Medi-Cal Managed Care Plan-ը ծածկում է բոլոր բժշկական ծախսերը, որոնք անհրաժեշտ են բժշկական տեսանկյունից:

7. Արդյո՞ք ես կունենամ Share of Cost (SOC):

Medi-Cal ունեցող որոշ մարդիկ ունեն SOC: SOC-ն այն գումարն է, որը Դուք պարտավոր եք վճարելու այդ ամիս նախքան Ձեր Medi-Cal-ի ապահովագրության մեկնարկը: Եթե ունեք SOC-ով Medi-Cal և մեկ ամսվա ընթացքում բավարարում եք Ձեր SOC-ը, Medi-Cal-ը վճարում է այդ ամսվա Ձեր մնացած առողջապահական ծախսերը: Դուք պետք է վճարեք Ձեր SOC-ը միայն մեկ անգամ այն ամսվա ընթացքում, երբ պետք է օգտագործեք Medi-Cal-ը:

8. Ինչպե՞ս կօգտագործեմ իմ նոր full Medi-Cal-ը:

Եթե չունեք SOC, Դուք պետք է գրանցվեք Medi-Cal Managed Care Plan-ում, երբ full Medi-Cal ունենաք: Այնուհետև կարող եք գնալ այն բժիշկների մոտ, ովքեր ծրագրի հետ աշխատում են ծրագրի սպասարկման տարածքում: Դուք կարող եք ստուգումներ անցնել, դիմել մասնագետի, բուժվել այնպիսի քրոնիկ հիվանդության համար, ինչպիսին է շաքարախտը, կամ վիրահատվել: Ձեր Medi-Cal Managed Care Plan-ը կփոխհատուցի Medi-Cal-ի ներքո ապահովագրված ցանկացած բժշկական անհրաժեշտ ծառայություն:

Եթե ապրում եք մի վարչաշրջանում, որը Medi-Cal է տրամադրում County Organized Health System-ի (COHS) կամ Single Plan-ի միջոցով, Դուք կգրանցվեք COHS Plan-ում, Single Plan-ում կամ Kaiser Permanente-ում: Անհրաժեշտ չէ որևէ գործողություն ձեռնարկել: Եթե Ձեր վարչաշրջանն ունի մեկից ավելի Medi-Cal Managed Care Plan, Դուք տեղեկատվություն կստանաք այն մասին, թե ինչպես ընտրել ծրագիր:

Պարզելու համար, թե արդյոք Դուք ապրում եք COHS-ի կամ Single Plan-ի վարչաշրջանում, այցելեք bit.ly/county-info:

Եթե Դուք ունեք SOC և ապրում եք Long-term Care Facility-ում (երկարատև բուժման խնամքի հաստատություն), գուցե ստիպված լինեք գրանցվել Medi-Cal Managed Plan-ում:

9. Ի՞նչ է Medi-Cal Managed Care Plan-ը:

Medi-Cal Managed Care Plan-ն առողջապահական ծրագիր է, որը.

- Աշխատում է Ձեր ծառայության տարածքում գտնվող բժիշկների, հիվանդանոցների և այլ առողջապահական ծառայություններ մատուցողների հետ՝ Ձեզ առողջապահական ծառայություններ տրամադրելու նպատակով:
- Ձեզ տրամադրում է Medi-Cal-ի՝ բժշկական տեսանկյունից Ձեզ անհրաժեշտ ծառայությունները:
- Աշխատում է Ձեր և Ձեր մատակարարի հետ՝ Ձեր խնամքը համակարգելու և կառավարելու համար:

Երբ Դուք միանում եք Medi-Cal Managed Care Plan-ին, դեռ կարող եք որոշ ծառայություններ ստանալ Fee-for-Service (regular) Medi-Cal-ի միջոցով՝ Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի փոխարեն: Շատ վարչաշրջաններում դրանք ներառում են.

- Որոշ home and community-based services
- Medi-Cal-ի դեղատնային ծառայությունների մեծ մասը
- Substance use disorder (SUD) բուժման ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ

Եթե ստանում եք In-Home Supportive Services (IHSS), Դուք կշարունակեք ստանալ այդ ծառայությունները Fee-For-Service (regular) Medi-Cal-ի միջոցով, ինչպես հիմա եք ստանում:

Medi-Cal Managed Care Plans-ի միջոցով հասանելի նպաստների մասին ավելին իմանալու համար այցելեք healthcareoptions.dhcs.ca.gov:

10. Ինչպե՞ս կարող եմ ընտրել Medi-Cal Managed Care Plan:

Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի ընտրությունները կախված են այն վարչաշրջանից, որտեղ ապրում եք:

Պարզելու համար, թե արդյոք Դուք ապրում եք COHS-ի կամ Single Plan-ի վարչաշրջանում, այցելեք bit.ly/county-info:

Եթե Դուք ապրում եք մի վարչաշրջանում, որը **չունի** County Organized Health System (COHS) կամ Single Plan, Health Care Options-ը Ձեզ կուղարկի *My Medi-Cal Choice* packet-ը: Այն կթվարկի Medi-Cal Managed Care Plans-ը Ձեր վարչաշրջանում: Այն տեղեկացնում է Ձեզ, թե ինչպես գրանցվել:

Եթե արդեն ընտրել եք բժշկ կամ կլինիկա, հարցրեք նրանց՝ արդյոք նրանք աշխատում են Medi-Cal Managed Care Plan-ի հետ Ձեր վարչաշրջանում: Եթե ցանկանում եք շարունակել օգտվել տվյալ բժշկի կամ կլինիկայի ծառայություններից, կարող եք ընտրել Medi-Cal Managed Care Plan, որն ընդունում է Ձեր բժշկին կամ կլինիկան:

Եթե Դուք օգտվում եք որևէ բժշկի կամ կլինիկայի ծառայություններից, որոնք **չեն** աշխատում Medi-Cal Managed Care Plan-ի հետ Ձեր վարչաշրջանում, կարող եք պահպանել Ձեր Fee-for-Service (regular) Medi-Cal-ը: Բարդ բժշկական վիճակներ ունեցող մարդիկ, ինչպիսիք են HIV/AIDS-ը, հղիությունը երրորդ եռամսյակում, շարունակական քաղցկեղի բուժումը, դիալիզով բուժումը և այլն, կարող են իրավասու լինել պահել Fee-for-Service (regular) Medi-Cal-ը: Եթե կարծում եք, որ դա վերաբերում է Ձեզ, լրացրեք և ուղարկեք «Medical Exemption Request» (Բժշկական ցուցումով ազատման հայց) ձևաթուղթը, որը գալիս է *My Medi-Cal Choice* packet-ի հետ:

Եթե չեք ընտրում Medi-Cal Managed Care Plan, Medi-Cal-ը Ձեզ համար կընտրի Medi-Cal Managed Care Plan Ձեր վարչաշրջանում: Դուք իրավունք ունեք ցանկացած պահի խնդրել փոխել Ձեր Medi-Cal Managed Care Plan-ը: Չանգահարեք Health Care Options **1-800-430-4263** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով կամ այցելեք healthcareoptions.dhcs.ca.gov:

Եթե փոխեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ը, պետք է գրանցվեք նույն վարչաշրջանի մեկ այլ Medi-Cal Managed Care Plan-ում: Դուք չեք կարող վերադառնալ Fee-For-Service (regular) Medi-Cal-ին, եթե գրանցված եք Medi-Cal Managed Care Plan-ում ավելի քան 90 օր:

11. Ի՞նչ է Health Care Options-ը:

Health Care Options-ը Medi-Cal-ի ծառայություն է, որն օգնում է անդամներին իմանալ Medi-Cal Managed Care Plans-ի մասին: Health Care Options-ը կարող է օգնել անդամներին ճիշտ ընտրություն կատարել Medi-Cal-ի վերաբերյալ:

Health Care Options-ի կայքէջն է՝ healthcareoptions.dhcs.ca.gov: Ավելին իմանալու համար զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY՝ 1-800-430-7077):

Health Care Options-ը տեղեկատվություն ունի non-COHS և Single Plan-ի վարչաշրջանների համար: Եթե Դուք ապրում եք COHS-ի կամ Single Plan-ի վարչաշրջանում, կապվեք Ձեր վարչաշրջանի սոցիալական ծառայության գործակալության հետ՝ ավելին իմանալու համար:

12. Ո՞վ կլինի իմ առաջնային խնամքի բժիշկը, եթե ես լինեմ Medi-Cal Managed Care Plan-ում:

Երբ միանաք Medi-Cal Managed Care Plan-ին, Դուք պետք է ընտրեք առաջնային խնամքի բժիշկ, ով աշխատում է Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի հետ: Եթե Դուք բժիշկ չընտրեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ում գրանցվելու օրվանից սկսած **30 օրվա** ընթացքում, Medi-Cal Managed Care Plan-ը բժիշկ կընտրի Ձեզ համար:

Եթե ցանկանում եք **պահել** Ձեր բժշկին.

- Հարցրեք Ձեր բժշկին, թե արդյոք նա աշխատում է Medi-Cal Managed Care Plan-ի հետ Ձեր վարչաշրջանում:
- Ընտրեք Medi-Cal Managed Care Plan, որի հետ աշխատում է Ձեր բժիշկը:

Եթե ցանկանում եք գտնել **նոր** բժիշկ.

- Կարդացեք բժիշկների առցանց ցուցակը, որից Medi-Cal Managed Care Plan-ը պետք է բժիշկ ընտրի: Կամ խնդրեք նրանց Ձեզ փոստով ուղարկել բժիշկների ցուցակը:
- Խնդրեք կատարել փոփոխություն՝ օգտվելու այն բժշկի ծառայություններից, ով աշխատում է Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի ցանցի հետ: Դուք կարող եք ցանկացած պահի խնդրել փոխել Ձեր բժշկին:
- Բժիշկ գտնելու կամ Ձեր բժշկին փոխելու օգնության համար զանգահարեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի անդամների ծառայությունների բաժնի հեռախոսահամարին՝ ծրագրին միանալուց հետո:

13. Կարո՞ղ եմ ես պահել իմ Medi-Cal-ի բժշկին, եթե նա չի աշխատում Medi-Cal Managed Care Plan-ի հետ:

Continuity of care (խնամքի շարունակականությունը) նշանակում է, որ Դուք կարող եք շարունակել այցելել Ձեր ներկայիս բժշկին կամ թերապևտին մինչև 12 ամիս, կամ որոշ դեպքերում ավելի երկար՝ Medi-Cal Managed Care Plan-ում գրանցվելուց հետո: Սա ներառում է Ձեր Medi-Cal-ի բժիշկներին, մասնագետներին և թերապևտներին: Թերապևտների տեսակները, որոնց Դուք կարող եք շարունակել այցելել, ներառում են ֆիզիոթերապևտ, էրգոթերապևտ, շնչառական թերապևտ, լոգոպեդ և վարքային առողջության բուժման մատակարար: Մատակարարը պետք է համաձայնի աշխատել Medi-Cal Managed Care Plan-ի հետ:

Եթե ցանկանում եք խնամքի շարունակականություն, ապա ծրագրին միանալուց հետո զանգահարեք Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի անդամների ծառայությունների բաժնի հեռախոսահամարին: Եթե խնամքի շարունակականության վերաբերյալ լրացուցիչ հարցեր ունեք, այցելեք bit.ly/DHCSCOC:

14. Ո՞վ չպետք է միանա Medi-Cal Managed Care Plan-ին:

Եթե Դուք ապրում եք non-COHS-ի կամ Non-Single Plan-ի վարչաշրջանում, գուցե ստիպված չլինեք միանալ Medi-Cal Managed Care Plan-ին, եթե Դուք.

- Ամերիկացի հնդիկ/Ալյասկայի բնիկ եք:
- Անհատ եք, ով օգնություն է ստանում Foster Care-ի, Adoption Assistance Program-ի կամ Child Protective Services-ի շրջանակներում:
- Ապրում եք California-ի վետերանների տանը:
- Արդեն ունեք հաստատված medical exemption Medi-Cal Managed Care Plan-ին միանալու պահանջից, կամ
- Բժշկական ցուցումով ազատում եք ստանում Medi-Cal Managed Care Plan-ին միանալու պահանջից:

Եթե Դուք անդամ եք, ով օգնություն է ստանում Adoption Assistance Program-ի կամ Child Protective Services-ի շրջանակներում, և ապրում եք Single Plan-ի վարչաշրջանում, Դուք ունեք ընտրության հնարավորություն՝ գրանցվելու Medi-Cal-ի առողջապահական ծրագրում կամ FFS Medi-Cal-ում:

Medi-Cal Managed Care Plan-ին միանալուց ազատումների մասին ավելին իմանալու համար զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

Պարզելու համար, արդյոք Դուք ապրում եք COHS-ի, Single Plan-ի, թե non-COHS-ի, non-Single Plan-ի վարչաշրջանում, այցելեք bit.ly/county-info:

15. Կարո՞ղ եմ բժշկական ցուցումով ազատում ստանալ Medi-Cal Managed Care Plan-ին միանալուց:

Եթե Դուք ունեք բարդ բժշկական վիճակ, և Ձեր Medi-Cal-ի բժիշկը կամ կլինիկան հանդիսանում է Fee-for-Service (regular) Medi-Cal-ի մատակարար, որը Ձեր վարչաշրջանի Medi-Cal Managed Care Plan-ի ցանցում չէ, Դուք կարող եք ստանալ բժշկական ցուցումով ազատում՝ Ձեր մատակարարին **մինչև 12 ամիս** պահելու համար:

Եթե Դուք ապրում եք վարչաշրջանում, որը **չունի** County Organized Health System (COHS) կամ Single Plan County և ցանկանում եք ժամանակավոր բժշկական բացառություն խնդրել, օգտագործեք «Medical Exemption Request» ձևաթուղթը: Սա կարելի է գտնել Ձեր ստացած *My Medi-Cal Choice* Packet-ում: Եթե ցանկանում եք մնալ Fee-for-Service (regular) Medi-Cal-ում, հնարավորինս շուտ խնդրեք ազատում: Շատ դեպքերում, Դուք չեք կարող իրավասու լինել ազատվել կառավարվող խնամքի ծրագրին գրանցվելուց, եթե **90 օր** գտնվել եք Medi-Cal Managed Care Plan-ում: Ձեր բժիշկը, կլինիկան կամ փաստաբանը կարող են օգնել

Ձեզ լրացնել ձևաթուղթը: Ձեր բժիշկը նույնպես պետք է լրացնի ձևաթղթի մի մասը: Լրացված ձևաթուղթը վերադարձրեք Health Care Options:

Բժշկական ցուցումով ազատում խնդրելու երկու եղանակ կա.

- Չանգահարեք Call Health Care Options` 1-800-430-4263 (TTY` 1-800-430-7077) հեռախոսահամարով
- Այցելեք Health Care Options-ի կայքէջ` healthcareoptions.dhcs.ca.gov:

Եթե Ձեր ազատումը հաստատվի, Դուք կարող եք մնալ Fee-for-Service (regular) Medi-Cal-ում և պահել Ձեր բժշկին մինչև բժշկական ցուցումով ազատման ավարտը:

Եթե Դուք ունեք որոշակի առողջական խնդիրներ և ցանկանում եք պահել Ձեր Medi-Cal-ի մատակարարին **ավելի քան 12 ամիս**, Դուք կարող եք խնդրել բժշկական ցուցումով ազատման երկարաձգում: Եթե ցանկանում եք երկարաձգում խնդրել, պետք է սպասեք առնվազն **11 ամիս** Ձեր առկա բժշկական ցուցումով ազատման մեկնարկի ամսաթվից: Health Care Options-ը Ձեզ 45 օր առաջ կտեղեկացնի, թե երբ է Ձեր բժշկական ազատման ավարտը: Նրանք Ձեզ կասեն, թե ինչպես կարելի է երկարաձգում խնդրել:

Եթե Ձեր ազատումը մերժվի, Դուք կարող եք պահել Ձեր բժշկին, եթե Ձեր Medi-Cal Managed Care Plan-ին խնդրեք continuity of care (խնամքի շարունակականություն): Խնամքի շարունակականության մասին ավելին կարդացեք 11-րդ հարցում: Եթե Դուք ապրում եք COHS-ի կամ Single Plan-ի վարչաշրջանում, հնարավոր է, որ **չկարողանաք** բժշկական ցուցումով ազատում խնդրել:

Ազատումների և այն խնդրելու մասին ավելին իմանալու համար այցելեք Health Care Options-ի կայքէջ` healthcareoptions.dhcs.ca.gov:

16. Ի՞նչ անել, եթե ես հարցեր ունեմ Medi-Cal-ի և իմ ներգաղթի կարգավիճակի վերաբերյալ:

U.S. Department of Homeland Security-ը և U.S. Citizenship and Immigration Services-ը **ՉԵՆ** համարում առողջության, սննդի և բնակարանային ծառայությունները որպես հանրային բեռի (public charge) որոշման մաս: Հետևաբար, Medi-Cal-ի նպաստների օգտագործումը (բացառությամբ ծերանոցի կամ հոգեկան առողջության հաստատության խնամքի) **ՉԻ** ազդի Ձեր ներգաղթի կարգավիճակի վրա: 26-ից 49 տարեկանների համար նախատեսված Adult Expansion-ը նահանգի կողմից ֆինանսավորվող ծրագիր է: Երբ դիմում եք նահանգի կողմից ֆինանսավորվող նպաստների համար, Ձեր տեղեկություններն օգտագործվում են միայն պարզելու, թե արդյոք կարող եք ստանալ Medi-Cal: Նահանգային օրենքները պաշտպանում են Ձեր տեղեկատվության գաղտնիությունը:

DHCS-ը և վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գործակալությունները չեն կարող պատասխանել ներգաղթի կամ հանրային բեռի (public charge) հետ կապված հարցերին: Եթե հարցեր ունեք Ձեր ներգաղթի կարգավիճակի և Medi-Cal-ի նպաստների վերաբերյալ, խոսեք ներգաղթի հարցերով որակավորված իրավաբանի հետ:

California Department of Social Services-ը ֆինանսավորում է իրավասու, ոչ առևտրային կազմակերպություններին՝ ծառայություններ մատուցելու California-յում ապրող ներգաղթյալներին: Կազմակերպությունների ցուցակը կարող եք գտնել bit.ly/immigration-service-contractors հասցեով:

Ներգաղթի մասին տեղեկությունների և ռեսուրսների համար այցելեք California's Immigrant Guide՝ immigrantguide.ca.gov:

Հանրային բեռի մասին տեղեկանալու համար տե՛ս California Health and Human Services Agency Public Charge Guide, այցելելով՝ chhs.ca.gov/public-charge-guide/:

17. Որտե՞ղ կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ:

- Չանգահարեք DHCS-ի Medi-Cal-ի Օգնության գիծ՝ **1-800-541-5555** հեռախոսահամարով: Չանգն անվճար է:
- Չանգահարեք DHCS-ի օմբուդսմենի գրասենյակ (Ombudsman) **1-888-452-8609** հեռախոսահամարով: Չանգն անվճար է: Կամ էլ, նամակ ուղարկեք նրանց MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov հասցեով: Օմբուդսմենի գրասենյակն օգնում է Medi-Cal ունեցող մարդկանց օգտվել իրենց նպաստներից և հասկանալ իրենց իրավունքներն ու պարտականությունները:
- Իմացեք ավելին Medi-Cal-ի մասին DHCS կայքէջում՝ bit.ly/MyMedi-Cal:
- Իմացեք ավելին DHCS-ի Adult Expansion-ի կայքէջում՝ bit.ly/AdultExpansion:
- Էլ. նամակ ուղարկեք AdultExpansion@dhcs.ca.gov հասցեով: